

ԱՏՈՒԳԻՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԴ

1. **Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:** (1 միավոր)
 Ուղղագիծ հավասարաչափ փոփոխական կոչվում է այն շարժումը, որի ժամանակ...
 - 1) մարմնի արագության մոդուլը հաստատուն է:
 - 2) մարմնի արագությունը կամայական հավասար ժամանակամիջոցներում փոխվում է նույն չափով:
 - 3) մարմնի շարժման ուղղությունը չի փոխվում:
 - 4) մարմնի արագության մոդուլն սկզբում աճում է, իսկ հետո նվազում:

2. **Ո՞րն է նախադասության սխալ շարունակությունը:** (1 միավոր)
 Ուղղագիծ հավասարաչափ փոփոխական շարժման արագացումը...
 - 1) հավասար է արագության փոփոխության և այն ժամանակի հարաբերությանը, որի ընթացքում տեղի է ունենում այդ փոփոխությունը:
 - 2) հաստատուն մեծություն է:
 - 3) թվապես հավասար է միավոր ժամանակում արագության փոփոխությանը:
 - 4) ժամանակի ընթացքում միշտ աճում է:

3. **Ճանապարհի հորիզոնական տեղամասում ավտոմեքենան արգելակում է: Ինչպե՞ս է ուղղված նրա արագացումը:** (1 միավոր)
 - 1) արագացումը զրո է
 - 2) շարժման ուղղությամբ
 - 3) շարժմանը հակառակ ուղղությամբ
 - 4) ուղղահիգ դեպի ներքև


4. **Մարմնի արագության պրոյեկցիան ներկայացված է $v_x = 2 + t$ հավասարմամբ, որտեղ մեծություններն արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով: Ի՞նչ բանաձևով է որոշվում տեղափոխության պրոյեկցիան այդ շարժման դեպքում:** (1 միավոր)
 - 1) $s_x = 2 + t^2$
 - 2) $s_x = \frac{t^2}{2}$
 - 3) $s_x = 2 + \frac{t^2}{2}$
 - 4) $s_x = 2t + \frac{t^2}{2}$

5. **Հաստատեք կամ ժխտեք հետևյալ պնդումները:** (4 միավոր)

	Այո	Ոչ
Հավասարաչափ փոփոխական շարժում կատարող մարմնի արագացումը՝ $\vec{a} = \frac{\vec{v} - \vec{v}_0}{t}$:		
Հավասարաչափ փոփոխական շարժում կատարող մարմնի արագությունը՝ $\vec{v} = \vec{v}_0 + \vec{a}t$:		
Հավասարաչափ արագացող շարժում կատարող մարմնի անցած ճանապարհը՝ $s = \frac{v_0^2 + v^2}{2a}$:		
Հավասարաչափ արագացող շարժում կատարող մարմնի անցած ճանապարհի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը պարաբոլ է:		


6. Մոտոցիկլավարը, շարժվելով դադարի վիճակից, 1 կմ երկարությամբ ճանապարհատվածն անցնում է $0,2 \text{ մ/վ}^2$ արագացմամբ: Որքա՞ն կլինի արագությունը ճանապարհի վերջում: (1 միավոր)

7. Ո՞ր գրաֆիկն է համապատասխանում x առանցքի երկայնքով մարմնի ուղղագիծ անհավասարաչափ շարժմանը: (1 միավոր)



8. 80 մ/վ վայրէջքի արագության դեպքում ինքնաթիռը, մինչև կանգ առնելը, անցավ 1600 մ ճանապարհ: Որքա՞ն է ինքնաթիռի արագացման մոդուլը: Շարժումը համարել հավասարաչափ փոփոխական: (1 միավոր)


9. Նկարում պատկերված է ուղղագիծ շարժվող մարմնի արագության ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Որքա՞ն է մարմնի արագացումը: Որքա՞ն է մարմնի անցած ճանապարհը ժամանակի 0–4 վ միջակայքում: (2 միավոր)



10. Մարմինը, շարժվելով ուղղագիծ հավասարաչափ՝ 5 վ-ում անցնում է 25 մ ճանապարհ, որից հետո սկսում է կատարել ուղղագիծ հավասարաչափ արագացող շարժում և հաջորդ 5 վ-ում անցնում 125 մ ճանապարհ: (3 միավոր)

- 1) Որքա՞ն է մարմնի արագացման մոդուլը շարժման երկրորդ 5 վ-ում:
- 2) Որքա՞ն է մարմնի վերջնական արագությունը:
- 3) Որքա՞ն է մարմնի միջին արագությունն ամբողջ ճանապարհին:

11. Նկարում պատկերված է X առանցքով շարժվող մարմնի արագության պրոյեկցիայի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: (4 միավոր)



- 1) Որքա՞ն է մարմնի արագացման մոդուլը:
- 2) Որքա՞ն է մարմնի արագության մոդուլը ժամանակի 10 վ պահին:
- 3) Որքա՞ն է 10 վ-ի ընթացքում մարմնի անցած ճանապարհը:
- 4) Որքա՞ն է 10 վ-ի ընթացքում մարմնի կատարած տեղափոխության մոդուլը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԳՂԱԿ

Միավոր	1-2	3-4	5-6	7-8	9-10	11-12	13-14	15-16	17-18	19-20
Գնահատական	1	2	3	4	5	6	7	8	9	10